ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
թիվ ___450__
« 10 » օգոստոսի 2018թ.

✆ 0256-2-14-75
էլ.փոստ: loriberd.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

պարոն Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2018թ. օգոստոսի 09-ի թիվ 69Ա և օգոստոսի 10-ի թիվ 70Ա որոշումները:

Առդիր՝ 2 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կատ. Ա. Մարտիրոսյան
հեռ. 094-34-70-38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«09» օգոստոսի 2018թ. № 69Ա

ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-009-0055-0074 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 0.18417 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՄԻԿ ՍՈՒՐԵՆԻ ՎԵՐՄԻՇՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ագարակ գյուղի բնակչուհի Հասմիկ Սուրենի Վերմիշյանի դիմումը, թիվ Ա097160 հողի սեփականության իրավունքի պետական ակտը, 20.06.2018թ. ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը (Գործ թիվ ԼԴ 1/0293/02/18), «ՄԵԼ ԵՎ ՄԻԼ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից տրված տնատիրության տեղագրական հատակագիծը, ղեկավարելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ 510-Ն օրենքով.

որոշում եմ.

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0055-0074 ծածկագրի տակ գտնվող՝ համաձայն թիվ Ա097160 հողի սեփականության իրավունքի պետական ակտի, ըստ փաստացի չափագրման 0.18417 հա բնակելի կառուցապատման հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը՝

ա) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0055-0074 ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման հողամասի մակերեսը՝ 0.18417 հա.

բ) հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ն կետում նշված 0.18417 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Հասմիկ Սուրենի Վերմիշյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2018թ. օգոստոսի 9
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 10 » օգոստոսի 2018թ. № 70-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՅԱՂԴԱՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱ ԱՐԹՈՒՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՀԱՍՑԵ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լոռի Բերդ համայնքի Յաղդան գյուղի բնակիչ Արա Արթուրի Գևորգյանին պատկանող 06-079-010-010 ծածկագրով, 0.292հա մակերեսով տնամերձին շնորհել՝ գ. Յաղդան, 2-րդ փողոց, տուն 6 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ

2018թ. օգոստոսի 10
գ. Լոռի Բերդ